



Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ Հայաստան ծրագիրը ներկայացնում է գյուղատնտեսական տվյալների բարելավման և տվյալների որակի գնահատման ուղղությամբ իր աշխատանքները

ՀՄՀ-Հայաստանի կողմից իրականացված տվյալների որակի գնահատման /ՏՈԳ/ արդյունքների ներկայացումը կայացավ 2009թ. սեպտեմբերի 12-ին, ժամը 11:00-ին, Արմենիա Մարիոթ հյուրանոցի Էրատո դահլիճում:

2008թ. ապրիլ ամսից ՀՄՀ-Հայաստանին տրամադրվող տվյալների որակը պարբերաբար գնահատվել է անկախ գնահատողի կողմից: Հաշվի առնելով, որ տվյալների որակի գնահատումը որպես այդպիսին նոր է Հայաստանի համար, Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամը ներկայացնում է գնահատման մեթոդաբանության մշակման և դրա իրականացման իր փորձը, ինչպես նաև ՏՈԳ-ի որոշ կարևոր արդյունքները: Հազարամյակի մարտահրավեր կորպորացիան բարձր գնահատելով իր ծրագրերի վերաբերյալ հուսալի և որակյալ տվյալների առկայությունը, տվյալների որակի գնահատումը սահմանել է որպես ֆինանսական հատկացումների նախապայմաններից մեկը:

Հանդիպմանը բացման խոսքով հանդես եկավ ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանը, Ազգային վիճակագրական ծառայության նախագահ Ստեփան Մնացականյանը, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը և Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի /ՀՄԿ/ Հայաստանի ծրագրի տնօրեն Ալեքս Ռասինը:

ՀՄԿ Մոնիտորինգի և գնահատման գծով տնօրենի տեղակալ Ռեբեկա Թանսթալը ներկայացրեց տվյալների որակի գնահատումը ՀՄԿ տեսանկյունից, իսկ իրականացնող կազմակերպություն՝ «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնի» ներկայացուցիչներ Գագիկ Թորոսյանը և Վարսենիկ Մնացականյանը ՏՈԳ հիմնական արդյունքները:

Մոնիտորինգը և գնահատումը ՀՄՀ-Հայաստան ծրագրի մաս կազմող հիմնական բաղադրիչներից է, որի միջոցով գնահատվում է ծրագրի կատարողականը, ծրագրային առանձին բաղադրիչների ազդեցությունը և ծրագրի ընդհանուր ազդեցությունը գյուղական աղքատության վրա:

Այս միջոցառման և ՀՄՀ-Հայաստան ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար խնդրում ենք այցելել՝

www.mca.am

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստանը (ՀՄՀ-Հայաստան) պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է ՀՀ կառավարության կողմից և պատասխանատու է Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի ու ՀՀ կառավարության միջև կնքված Համաձայնագրի թափանցիկ իրականացումը վերահսկելու համար: